


## ԾԻՍԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔՆԵՐ

## Նույնականացնելու, Պատարագի Եւ<sup>1</sup> ողորմութիւն ընելու մասին

Աղքատներուն ընդունելութիւն ընելը  
շատ օգտակար է ու անոնց աղօքքները  
Աստուծոյ մօտ են. «Երանելի է ան, որ կը  
խորիի աղքատին եւ չքատրին մասին,  
Տերը կը փրկէ զայն, երանելի կ'ընէ երկրի  
վրայ եւ թշնամիներուն ձեռքը չի մատներ  
զայն»: (Սաղմոս 41:1-3): Կարիքատրները  
կերակրելու երջանկութիւնը այս է, ինչ որ  
Քրիստոս իրեն համար կատարուած կը  
նկատէ: Իսկ ի՞նչ պիտի շահիս, երբ  
ունետրները խնճոյքի հրաւիրեն եւ կամ  
ի՞նչ պիտի ըլլայ անոր օգուտը: Անօթի-  
ներուն համար եղած ընդունելութիւնը  
օգտակար է, իսկ կուշտերուն համար ե-  
ղածը՝ ոչ: Քրիստոս չըսաւ. «Յագեցած-  
ները կշտացուցիք» ու նաև չըսաւ. «Խմե-  
լիք տուիք անոնց, որոնք գինով էին», այլ  
ըսաւ. «Տեսաք անոնք, որ ծարաւ էին եւ

դուք անոնց ջուր տուիք խմելու: Տեսաբ  
մերկերը ու զանոնք հագուցիք եւ օտար-  
ներուն այցելեցիք»: Նման գործերն են, որ  
արժանի պիտի ըլլան վարձատրութեան եւ  
երանուրեան եւ ոչ թէ կոչշտերուն եւ ունե-  
տրներուն համար եղած կերուխումները,  
որովհետեւ ան, որ աղքատը, կարօտեալը,  
օտարը, հիւանդը եւ անտունը կը կերակրէ,  
ոչ թէ մարդ մը, այլ՝ Քրիստոսն է, որ կ'ըն-  
դունի, Քրիստոսն է, որ կը սփոփէ, Քրիս-  
տոսն է, որ կը մխիթարէ, Քրիստոսն է, որ  
կը հանգչեցնէ եւ Քրիստոսն է, որ կը ծա-  
ռայէ, քանզի անսուտ է Տերունի խօսքը:

### (Ծառեր Յովիան Մանղակունի )



ԵԿԵՂԵՑԻՆ  
ԵԿԵՂԵՑԻՆ Սուլրք Ե

Եկեղեցին սուրբ է իր Էռիքեամբ  
եւ քնութեամբ, որովհետեւ ան քնա-  
կարանն է Աստուծոյ, մարմինը՝  
Քրիստոսի եւ մատակարարը՝ աստ-  
ածային խորհուրդներուն: Կարելի է  
ըսել երկնային դրախտն է անիկա  
երկրի վրայ, ուր մարդ անբիծ պրտով  
եւ հոգիով կրնայ Աստուծոյ համայն-  
պիլ:

ღրիստոնէական Եկեղեցւոյ վա-  
ւերացումը հաստատող վերոյիշեալ  
ստորոգելիներէն զատ Հայոց Եկեղե-  
ցին կը բնորոշուի նաեւ, որպէս Հա-  
յաստանեայց Եկեղեցի:

Հայոց եկեղեցին քրիստոնէական մեծ ընտանիքին մասնիկը կազմելով եւ նիկիական Հանգանակիքանաձեւումով Սի, Ընդհանրական, Առաքելական եւ Սուրբ կոչումներով նույիքականացած է որպէս Հայց. Եկեղեցին...

Ծարունակելիք



ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ԼԻԲԱՆԱՆԻ



የዚህ አገልግሎት የሚያስፈልጉ ስርዓት ተደርጓል (U.119.105)

đT. SURH

ԿՐՈԿԻ, 4 ՅՈՒՆԻ 2021

Theta 27

Կիբակի օրերու ԱՍՈՒԱԾՆՉԱԿԱՆ ԲՆԹԵՐՑՈՒՄՆԵՐ

Bu. 3.1-11: < n. 11.13-24

ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ԱՆԵՏԱՐԱՆԸ ԸՆՍԹԵԼՈՒ 14.13-21

ԱՐԵՏԱՐԱՆ ԸՆՍ ՄԱՏԹԵՈՒԻ 14.13-21

Երբ Յիսուս Յովհաննէսի գլխատումը լսեց, նաւակով մեկնեցաւ այդտեղէն և առանձին զնաց ամայի վայր մը: Շրջանի քաղաքներուն բնակիչները լսելով ասիկա, քաելով հետեւեցան իրեն: Երբ Յիսուս նաւակէն դրւս ելաւ, տեսաւ մեծ բազմութիւնը, զբաց անոնց վրայ եւ հիւանդները բժշկեց:

Երեկոյեան, իր աշակերտները իրեն մօտեցան եւ լսին. «Ամայի տեղ ենք եւ ժամանակն ալ ուշ է. արձակէ՛ ժողովուրդը, որպէսզի երբան շրջակայ գիտերը իրենց համար ուտելիք զնելու»:

Յիսուս լսաւ. «Իմչո՞ւ իրենք երթան: Դուք սուէք անոնց ուտելիքը»:  
Անոնք լսին Յիսուսի. «Հու զրեք ոյիհանք ունինք, բազի հինգ հացէ եւ երկու ձուկէ»:

Յիսուս ըսաւ. «*Հու բերէք անոնք*»: Եւ հրամայեց, որ ժողովուրդը նստեցնեն խոտին վրայ: Ապա առաւ հինգ հացը եւ երկու ձուկը, փառք տուաւ Աստուծոյ, օրինեց, կտրեց հացերը և տուաւ աշակերտներուն, որոնք բաշխեցին ժողովուրդին: Բոլորն ալ կերան ու կշտացան եւ աշակերտները աւելցած կտրները հաւաքելով՝ տասներկու սակառ լեցուցին: Իսկ ուսողներուն թիւր շուրջ հինգ հազար էր, կիներն ու մանուկները չհաշուած:

ՍՈՒՐԲ ԳԻՐՎԱՆ ԿԸ ՓՈԽՆԵՐ ՄԵՐ ԿԵԱՆՔԸ

Կը պատմուի, թէ հիւսիսային Ափրիկէի մէջ մարդակեր մը դարձեալ կու գայ Եւ ինքոյնք կը նուիրէ աղօթքի եւ Սուրբ Գիրքի ընթերցանութեան: Օր մը հանրային պարտէզի մը մէջ նստած, երբ Սուրբ Գիրք կը կարդար, Ամերիկացի մը կը տեսնէ զինք եւ ծաղրելով կ'ըսէ. «Դու՛ն, ո՞վ Ափրիկեցի, դո՞ւն ալ սկսար Սուրբ Գիրք կարդալ»: Նորադարձ Ափրիկեցին կը պատասխանէ ըսելով. «Եթէ Սուրբ Գիրք չկարդայի, դուն հիմա իմ նաշ եղած պիտի րլայիր»: Այս պատմութիւնը մեզի կը սորվեցնէ, թէ ինչպէս Սուրբ Գիրքը կրնայ փոխել մարդուն կեանքն ու նկարագիրը: Անիկա մարդակեր մարդը կը վերածէ մարդասէր մարդու:

## ՍՈՒՐԱԵՐ ԵՒ ՏՕՆԵՐ

ՄՐԲՈՅ ԵՐԿՈՏԱՍԱՍԱ ԱՌԱՋԵԼՈՅՑ  
ՔՐԻՍՏՈՍԻ ԵՒ ՊՈՂՈԽ ԵՐԵԹԱ-  
ՍԱՆԵՐՈՐԴ ԱՌԱՋԵԼՈՅՑ

### Պողոս Առաքեալ

Քրիստոսի յարութենէն ու համբարձումէն ետք ընտրուած առաքեալ՝ Պողոս առաքեալ եղաւ քրիստոնէութիւնը տարածող եւ քարոզող մեծագոյն առաքեալը: Ան իր հրեական ծագումով, ստացած յունական կրթութեամբ եւ հռոմէական հպատակութեամբ, կը դառնայ ընտիր անօթ լաւագոյնս տարածելու քրիստոնէութիւնը այն ժամանակուան մշակոյթին համապատասխան մօտեցումով, եւ իր հռոմէական հպատակութենէն օգտուելով:

Պողոս առաքեալ, որ նախապէս կը կոչուէր Սողոս, ծնած է Կիլիկիոյ Տրուսաղէմի մէջ, բայց սնած Երուսաղէմի մէջ, Գամաղիէլի ձեռքին տակ հրեական ճշմարիտ օրէնքով (Գրծ. 22.3): Ան եղած է փարիսեցի եւ թունդ ազգայնական:

Քրիստոնէական եկեղեցւոյ առաջին շրջանին, Պողոսի մեծագոյն մտահոգութիւնը կ'ըլլայ հալածել քրիստոնէաները եւ բանտարկելով, հրեւթեան վերադարձնել զանոնք: Ան Երուսաղէմի մէջ բոլորէն ճանչցրելով իբրեւ հակառակորդ նոր կրօնքին, կը խնդրէ քահանայապետէն, որպէսզի Դամասկոս երթայ ու այնտեղ եւս հալածէ քրիստոնէաները եւ բանտ նետէ զանոնք: Սակայն Դամասկոսի ճամբարուն վրայ Քրիստոս կը յայտնուի իրեն եւ դարձի կը բերէ, զինք ընտրելով իբրեւ խորհուրդը, (ըսելով) «Սյս մէկը կատարեցէ՞ իմ յիշատակիս համար» (Ա. Կրթ. 11.24):

Այսպիսով Պողոս, այս անգամ Սեծագոյն եւ ճշմարիտ Քահանայապետէն առաքուելով կը կազմակերպէ ճամբորդութիւններ, որոնք կ'ըլլան իր առաքելութեան ամենէն գործօն ժամանակները եւ առիթները:

Ան կը հիմնէ եկեղեցիներ եւ իր ճամբորդութիւններէն ետք նամակներ որկելով անոնց կը քաջալերէ զիրենք մնալու այն հաւատքին մէջ, որ ինք քարոզած է իրենց: Պողոս առաքեալի նամակները Նոր Կտակարամին մէջ թիտվ 14 հատ են:

Պողոս առաքեալի կատարած երեք ճամբորդութիւններուն մասին կը պատմէ գործը Առաքելոց զիրքը, որը հերիխնակը ներկայացնելով Պողոս վերջին ճամբորդութիւնը այն ժամանակուան մշակոյթին համապատասխան մօտեցումով, եւ իր հռոմէական հպատակութենէն օգտուելով:

Աւանդութեան համաձայն, Պողոս կը հասնի մինչեւ Սպանիա եւ ապա վերադառնալով Հռոմ այնտեղ սուրով կը նահատակուի:

### ՀԱՐՑՈՒՄ ՊԱՏԱՍԽԱՆ ԲԱԺԻՆ

#### Ո՞Վ Է ՊԱՏԱՐԱԳԻ ԽՈՐՀՈՒԹԵԼ ՀԱՍՏԱՏՈՂԸ

Յիսուս Քրիստոս՝ իր մատնութեան երեկոյին: Երբ վերթատունը իր աշակերտներուն հետ սեղան նստած էին, Հին Ռւխտի Զատիկը կատարելէն ետք, Նոր Ռւխտի Զատիկը հաստատեց Հացը առնելով ըստաւ. «Առէք կերէք, ասիկա իմ մարմինս է» (Մո. 26.26), ապա բաժակը առաւ ու ըստաւ. «Ամէնիդ ալ խմեցէ՞ ասկէ, ասիկա իմ նոր Ռւխտիս արիւնն է» (Մո. 26.28), եւ զայն Առաքեալներուն հադրդելով պատուիրեց միշտ կատարել հադրդութեան խորհուրդը, (ըսելով) «Սյս մէկը կատարեցէ՞ իմ յիշատակիս համար» (Ա. Կրթ. 11.24):

### ՀՈԳԵՒՈՐ ՊԱՏ ԳԱՍ

#### ԴՐԱՄԾՈՅ ՄԻՐՈՂԸ ՉԻ ԿՐՄԱՅ ՈՂՈՐՄՈՒԹԻՒՆԸ ՄԻՐԵԼ

Տալ կարենալու համար, առաջին հերթին պէտք է զիտնալ, որ մեր ունեցածին տէրը Աստուած է եւ ոչ թէ մենք: Երկրորդ, պէտք չէ կապուած ըլլալ մեր ունեցածին: Երրորդ, պէտք չէ սիրենք դրամը: Չորրորդ, պէտք չէ մեր վստահութեան ու յոյսի աղբիրը դրամը նկատենք: Պողոս առաքեալ կը թելադրէ Տիմոթէոսի, որ այս աշխարհի հարուստներուն պատուիրէ, որ շատ շիպարտանան եւ անկայուն հարստութեան չվստահին, այլ՝ վստահին Աստուծոյ, որ ամէն ինչ առատօրէն կու տայ մեզի, որպէսզի վայելենք: (Ա.Տմ 6.17):

#### ՄԵՐ ՍՈՐՎԵԼԻ ԻՔ

#### ՀՈԳԵՒՈՐ ԴԱՍԸ:

Մէկը՝ որ կապուած է իր ունեցած հարստութեան, մէկը՝ որ կը սիրէ դրամը, մէկը՝ որ կը վստահի իր դրամին, չի կրնար օգնել ուրիշին: Դրամը պաշտողը՝ չի կրնար բաժնուիլ անկէ: Դրամը սիրողը՝ չի կրնար ողորմութիւնը սիրել: Դրամին վստահող մարդը՝ չի կրնար ուրիշ մարդոց վստահիլ: Դրամին ապահոնող մարդը՝ չի կրնար անօգնականին ապահէն ըլլալ: Դրամէն զատ ուրիշ բան չտեսնողը՝ չի կրնար տեսնել չքատորը:

### ԵԹԵ ԿԱՄ ԵՐԲ Կ'ՈՒՁԵՍ...

ԵԹԵ ՎԱԻՐԱՎՈՒՎԾ ԵՍ  
ԱՐԴՐՈՒԹԻՒՆ ԿԸ ՓՆՏՈԵՍ,  
ԿԱՐԴԱՎ ՍԱՂՄՈՍ 26

Արդարութիւն ըրէ ինձի, Տէ՛ր, անմեղ եմ ես: Մեզի՝ Տիրոջ վստահեցայ, եւ պիտի չսասանիմ: Փորձէ զիս, Տէ՛ր, քննէ՛ զիս, քու կրակովդ փորձէ ցանկութիւնները սրտիս եւ խորհուրդները մտքիս: Որովհետեւ ողորմութիւնն չհանեցի ես միտքէս, եւ ապրեցայ՝ միշտ քեզի հաւատարիմ մնալով: Անպէտ մարդոց ընկերութիւն չըրի՝ ես, կեղծաւրին հետ քնա՛ գործ չունեցայ: Ատեցի միշտ չարերուն հաւաքոյթը, ամբարիշտին հետ բարեկամ ես չեղայ: Որպէս նշան անմեղութեան՝ պիտի լուամ ձեռքերս, եւ սեղանիդ շորջ դառնալով՝ սպասարկեմ քեզի, Տէ՛ր: Գոհութեան ե՞րգ պիտի երգեմ ես քեզի, եւ քու բոլոր սրանչելի գործերդ պիտի թուեմ: Տէ՛ր, կը սիրենք վայելութիւններուն տանդ, այս յարկին՝ ուր քու փառքդ կը բնակի: Ամբարիշտներուն եւ ոճրագործին հետը միասին զիս ալ կորուսի մի՛ դատապարտեր: Անօրէնութեամբ լի են անոնց գործերը, եւ անոնց ձեռքերը՝ կաշառքով լեցուն: Բայց անմեղ եմ ես, ողորմէ ինձի եւ փրկէ՛ զիս, Տէ՛ր: Անսայթա՛ պահէ իմ քայլերս միշտ, եւ ես խմբուած ժողովուրդին:

ՄԻԾ ՍՍԴՄՈՍ ԿԱՐԴԱՎ